ԷԴԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ «ՏԵՐՅԱՆԱԿԱՆ ՇԱՐԸ»

ՇՈՒՇԱՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արդի հայ կոմպոզիտորական դպրոցի ներկայացուցիչներից մեկի՝ Է. Հովհաննիսյանի «Տերյանական շարը», 1984-1985թթ. գրված, խմբերգային երաժշտության ոլորտում նշանակալի ստեղծագործություն է, որտեղ կոմպոզիտորը նորովի՝ էպիկական, հայրենասիրական, փիլիսոփայական դրսևորումներով է բացահայտել հայ մեծ բանաստեղծ Վ. Տերյանի կերպարը: Շարը բաղկացած է 20 a cappella խմբերգերից, որոնցից յուրաքանչյուրում բանաստեղծությունը և բանաստեղծական կերպարը թելադրում են որոշակի երաժշտական ձևն ու ներքին բովանդակությունը: Շարում մեծ նշանակություն ունի պոլիֆոնիկ մտածողությունը, որը կոմպոզիտորի կարևոր ոճական առանձնահատկություններից է: Պոլիֆոնիկ բազմազան հնարքների կիրառման շնորհիվ բանաստեղծի կերպարը կոմպոզիտորի ընթերցմամբ դրսևորում է իր բազմաշերտ ու խորը ներքին էությունը: Իսկ մոնոթեմատիզմի առկայությունը շարին հաղորդում է միջանցիկ զարգացումով միաձույլ մեծակերտ հորինվածքի հատկանիշներ:

Բանալի բառեր – Էդգար Հովհաննիսյան, «Տերյանական շար», Վահան Տերյան, խմբերգ, ազգային ռիթմաինտոնացիաներ, պոլիֆոնիա, մոնոթեմատիզմ:

Է. Հովհաննիսյանը XX դարի երկրորդ կեսի հայ կոմպոզիտորական դպրոցի ականավոր ներկայացուցիչներից է, ում ստեղծագործություններում միահյուսվել են ազգային և միևնույն ժամանակ դասական մտածելակերպը, ինչպես նաև ժամանակակից մի շարք միտումներն ու արտահայտչամիջոցները: Դրանցից առավել ցայտունը նեոկլասիցիզմն է՝ համեմված հայ երաժշտության ռիթմաինտոնացիոն պաշարով: Ազգային երաժշտությունից բխող մեղեդիական, ռիթմական դարձվածքները կոմպոզիտորը միավորել է դասական երաժշտության ձևակառուցման օրենքներով:

Կոմպոզիտորը հեղինակ է տարբեր ժանրերում գրված մի շարք ստեղծագործությունների: Է. Հովհաննիսյանի գրչին են պատկանում օպերային, սիմֆոնիկ, կամերային-գործիքային, վոկալ, խմբերգային ժանրերում գրված ստեղծագործություններ, ինչպես նաև երաժշտություն ֆիլմերի, թատերական ներկայացումների համար և ժողովրդական երգերի մի քանի տասնյակ մշակումներ: Կոմպոզիտորի ժանրային նախասիրությունների սպեկտորը լայն է և գունեղ, սակայն էլ՛ ավելի գունեղ է կոմպոզիտորի լեզվամտածողությունը, որը տարբերվող էր և նոր XX դարի երկրորդ կեսի հայ երաժշտական արվեստի համատեքստում:

Է. Հովհաննիսյանի ստեղծագործական ժառանգության մեջ իրենց ուրույն և կարևոր տեղն են զբաղեցնում խմբերգային ստեղծագործությունները,

որոնցում դրսևորվել են կոմպոզիտորի դասական և միևնույն ժամանակ արդիական գրելաոճը, լայն մտահորիզոնը, ինչպես նաև ազգայինի այդչափ նուրբ և խորը զգացողությունը:

Մարդկային ձայնն իր բոլոր դրսևորումներով կոմպոզիտորի ստեղծագործական տարերքներից էր, այդ իսկ պատճառով խմբերգային երաժշտությանը Է. Հովհաննիսյանը բազմիցս է անդրադարձել: Խմբերգային ստեղծագործություններն իրենց բնույթով տարբեր են՝ քնարական, էպիկական, ժողովրդական և այլն: Դեռևս կոնսերվատորիայում սովորելու տարիներին նա գրեց «Երկու ափ» կանտատը Գ. Էմինի տեքստերով: 1970-1974թթ. կոմպոզիտորը եղել է Հայաստանի երգի-պարի պետական անսամբլի գեղարվեստական ղեկավար և այդ ընթացքում գրել հայկական ժողովրդական երգերի մշակումներ՝ հատուկ անսամբլի համար: 1979թ. կոմպոզիտորի նախաձեռնությամբ ստեղծվեց Հայաստանի հեռուստառադիոյի «Հայ երգի կամերային երգչախումբը», որը բավական նշանակալի երևույթ էր այդ ժամանակների համար. «…մի համույթ, որն ամբողջությամբ՝ ժանրային, գեղագիտական ու կատարողական ոճի առումով ենթարկվում էր գեղարվեստական ղեկավարի նախասիրություններին»[1]: Այդ տարիներին է նա գրել ժողովրդական երեսունհինգ երգերի մշակումների խմբերգային շարը և «Տերյանական շարը», որին էլ կանդրադառնանք:

Ականավոր կոմպոզիտորին միշտ գրավել և հուզել է հայ պոետների քնարերգությունը: Տերյանի պոեզիային կոմպոզիտորի անդրադարձը ծնունդ տվեց քսան a cappella խմբերգերի՝ երկսեռ խառը երգչախմբի համար և երեք ռոմանսի: Ինչպես կոմպոզիտորի հուշագրության մեջ է նշվում, Է. Հովհաննիսյանն իր հոգու պարտքը Վ. Տերյանի հանդեպ համարեց կատարված[2]:

Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Ն. Թահմիզյանը նշել է. «Շատ տպավորիչ են կոմպոզիտորի այս խմբերգային ստեղծագործությունները: Առհասարակ խմբերգային արվեստում է վառ արտահայտվում Է. Հովհաննիսյանի ազգային լեզվամտածողությունը»[3]:

«Տերյանական շարը»[4] գրվել է կոմպոզիտորի՝ կամերային երգչախմբի

---

[1] **Մովսիսյան Ծ.** , Էդգար Հովհաննիսյանի կամերային-գործիքային և սիմֆոնիկ ստեղծագործությունները, Երևան, 2012, էջ 35, 36:

[2] **Հովհաննիսյան Է.,**Կյանքս հուշերում (տեքստը գրի առավ և կազմեց Ծ. Մովսիսյանը), Երևան, 1998, էջ 110:

[3] **Հովհաննիսյան Է.**, Տերյանական շար, խմբերգեր, Երևան, 2015, էջ 7:

[4] Առաջին անգամ հատվածաբար հնչել է Հայաստանի հեռուստառադիոյի հայ երգի

հետ աշխատելու տարիներին՝ 1984-1985թթ. : Այն նվիրված է բանաստեղծի ծննդյան 100-ամյակին: Է. Հովհաննիսյանի մտահղացմամբ այս ստեղծագործությունը պետք է դառնար ռեքվիեմ Վ. Տերյանի հիշատակին[5]: Այն նախատեսված է կատարվելու երկու բաժնով համերգի ընթացքում: Կոմպոզիտորի մտահղացմամբ «Տերյանական շարն» իր բողոքն է Տերյանի կերպարի ոչ ճիշտ ընկալման դեմ, այն է՝ միակողմանի, քնարական-ինտիմ և կամերային-սալոնային ընթերցման դեմ[6]: Ըստ Է. Հովհաննիսյանի՝ Վ. Տերյանը «ենթատեքստային» բանաստեղծ է, ինչը երաժշտության մեջ լիարժեք արտահայտում է հենց պոլիֆոնիան: Այդ է պատճառը, որ կոմպոզիտորը «Տերյանական շարում» շատ է օգտագործել պոլիֆոնիկ միջոցներ, հատկապես, երբ ներկայացրել է փիլիսոփայական կամ հոգեբանական բնույթի կերպարներ: Կոմպոզիտորի խորը համոզմամբ Վ. Տերյանը, այնուամենայնիվ, շատ մոտ էր կանգնած հայրենի հող ու ջրին, այլ կերպ ասած՝ իր ակունքներին: Այս միտքը նույնպես իր երաժշտական մեկնաբանումն է ստացել շարում ժողովրդական երաժշտությունից բխող մի շարք տարրերի միջոցով:

Է. Հովհաննիսյանը յուրաքանչյուր բանաստեղծությանն յուրովի է մոտեցել՝ հաշվի առնելով միտքը, բովանդակությունը, կերպարները և բանաստեղծական ձևը: Շատ հաճախ կոմպոզիտորը նախապատվություն է տալիս երգային-քառյակային կառուցվածքին: Նա կրկնում է բանաստեղծական քառատողի վերջին երկու տողերը, որոնք բանաստեղծության մայր օրինակում բացակայում են՝ այդ կերպ ստեղծելով արհեստական կրկնակներ: Այդ տեսակի խմբերգերն աչքի են ընկնում փոքր ծավալով, զգացմունքային զսպվածությամբ, պոլիֆոնիկ արտահայտչամիջոցների սակավ օգտագործմամբ, մեծ ինտերվալային թռիչքների բացակայությամբ, հոմոֆոն-հարմոնիկ տեսակի շարադրանքով և մեղեդու գերիշխանությամբ: Այդ տեսակի խմբերգերի շարքում են դասվում «Որպես լեռն է մեր պայծառ», «Դրեք սիրտս դարավոր», «Անվերջ գիշերի մռայլ վիհերում», «Մի փրկություն կա միայն» և այլ խմբերգեր:

Մեկ այլ տեսակի խմբերգերի շարքին են պատկանում խմբերգ-ռոնդո-

կամերային երգչախմբի կատարմամբ (գեղարվեստական ղեկավար՝ Է. Հովհաննիսյան, խմբավար՝ Հ. Թոփիկյան): Ամբողջությամբ համերգային կատարմամբ հնչել է Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը Հայաստանի հեռուստառադիոյի հայ երգի կամերային երգչախմբի կատարմամբ, գեղարվեստական ղեկավար և խմբավար՝ Տ. Հեքեքյան):

[5] **Հովհաննիսյան Է.,** Կյանքս հուշերում, էջ 110:

[6] **Оганесян Э.** Он - глубже эпичнее // "Коммунист", 1985, 18 июня.

ները, օրինակ՝ «Մայրըս ուներ», «Տարեք ինձ մեր հեռու Գանձան», «Թափառում են ու երգում» և այլն: Ռոնդո ձևն այս դեպքում միջոց է, որի շնորհիվ կոմպոզիտորը կարողանում է ճիշտ երաժշտական մեկնաբանում տալ մենախոսությանը: Այլ կերպ ասած՝ ռոնդո ձևի ռեֆրենը կերպարի մեներգն է, խմբերգում նրա դրսևորման կերպը: Այս տիպի խմբերգերին բնորոշ են միջանցիկ զարգացման սկզբունքը, մեծ ծավալը, ընդհանուր փիլիսոփայական բնույթը, որի համար միջոց է ծառայում պոլիֆոնիան՝ իր բազմազան դրսևորումներով: Խմբերգերն աչքի են ընկնում նաև մեծ ինտոնացիոն թռիչքներով, մոնոթեմատիզմով, երբեմն նաև ժամանակակից շունչ հաղորդող դիսոնանս հնչողությամբ: Է. Հովհաննիսյանի «Տերյանական շարում» մեծ տեղ է հատկացված այն խմբերգերին, որոնք մեկ կերպարի շուրջ են հյուսված (նրանցում խմբերգի ձևը և բնույթը բխում են բանաստեղծությունից): Կոմպոզիտորն ընտրում է կերպարը, նրան հատուկ մենակատար ձայնը և յուրահատուկ երաժշտական մեկնաբանում հաղորդում: Նշենք մեցցո-սոպրանոն, որը և՛ մոր կերպարի երաժշտական մարմնավորումն է («Մայրըս ուներ»), և՛ խոցված սրտի («Տեսա երազ մի վառ»), իսկ սոպրանոն երիտասարդ աղջկա կերպարն է, որը հիմնականում հայտնվում է որպես հուշ («Դու գալիս ես մութ գիշերապահին»): Երբեմն կոմպոզիտորը երազի և իրականության երկխոսությունը կանացի այս երկու ձայների երկխոսության միջոցով է իրականացնում: Այդ տիպի խմբերգերից առավել հայտնի է «Հեռու դղյակի քնքուշ թագուհին» խմբերգը, որը հենց սկսվում է սոպրանոյի և մեցցո-սոպրանոյի երաժշտական երկխոսությամբ: Ընդ որում, հարկ է նշել այստեղ պոլիֆոնիայի կարևորությունը, որն ինչպես այս շարում, այնպես էլ Է. Հովհաննիսյանի մնացյալ ստեղծագործություններում հեղինակի գրելաոճին հաղորդում է ուրույն գույն:

«Տերյանական շարի» բանաստեղծությունների զգալի մասը կոմպոզիտորը վերցրել է Վ. Տերյանի «Երկիր Նաիրի» բանաստեղծական շարքից: Այդ իսկ պատճառով հայրենասիրական մոտիվն ու էպիկականությունը նույնքան հարազատ են այս շարին: Ժողովրդական բանահյուսության մեջ էպիկական ժանրի երգերին հատուկ են լայնաշունչ ֆրազները, ընդգրկուն դիապազոնը, ինչպես նաև ռիթմի և դինամիկայի ազատությունը: Այդ նույն երաժշտալեզվական առանձնահատկությունները կոմպոզիտորի կողմից կիրառվել են «Դու հպարտ չես իմ հայրենիք», «Կարծես թե դարձել եմ ես տուն» և այլ խմբերգերում: Ինչպես Է. Հովհաննիսյանն է նշել. «...Վ. Տերյանի էպիկականությունը սպասում է ոչ միայն իր բացահայտմանը, այլև «ժամանակի մեջ» զար-

գացմանը»[7]: Այստեղից կարելի է եզրակացնել այն, թե ինչու է կոմպոզիտորը մեծ տեղ հատկացրել Տերյանի էպիկական ընթերցմանը:

Ինչպես վերը խոսվեց, բանաստեղծը շատ մոտ էր կանգնած ժողովրդական ավանդույթներին, որոնք ակնհայտ դրսևորվել են «Տերյանական շարում»: Հարկ է նշել, որ ժողովրդական խաղիկի երաժշտական ձևակերպումը մորդենտն է, որը բազմիցս հանդիպում է «Դրեք սիրտըս դարավոր» խմբերգում: Ինչ վերաբերում է հոգևոր երգաստեղծության ավանդույթներին, ապա դրանք ոչ թե որոշակի ձայնեղանակներին կամ սկսվածքներին բնորոշ ընդհանուր գծերով են դրսևորվում, այլ պարզապես ընդհանուր ոճավորման:

Այսպիսով, ընդհանուր առմամբ կոմպոզիտորի խմբերգային ոճին բնորոշ է տոնայնական մտածողությունը: Բոլոր խմբերգերում նկատելի է որոշակի լադատոնայնության առկայությունը: Վերլուծելով ստեղծագործությունները՝ պարզ է դառնում, որ Է. Հովհաննիսյանը նախապատվությունը տալիս է մինոր լադին: Չնայած հանդիպում են նաև մաժոր լադում գրված խմբերգեր: Ժամանակակից արտահայտչամիջոցներն այստեղ երկրորդական դերում են և ծառայում են կերպարի ճիշտ մեկնաբանմանը: Մեծ է նաև պոլիֆոնիկ միջոցների կիրառումը, որոնցից կոմպոզիտորը նախապատվությունը տալիս է իմիտացիաներին: Կոմպոզիտորը պոլիֆոնիկ շարադրանքը հաճախ կիրառել է էպիկական, փիլիսոփայական բնույթի և միջանցիկ զարգացման օրինաչափություններով գրված խմբերգերում: Իսկ երգային-քառայակային տիպի խմբերգերում գերիշխում է հոմոֆոն-հարմոնիկ շարադրանքը: Կոմպոզիտորը խմբերգաշարում չի փոփոխել տերյանական տեքստը, նրա կերպարները և հնարավորինս ճշգրիտ երաժշտական մեկնաբանում է տվել դրանց: Այլ կերպ ասած, «Տերյանական շարը» Տերյան բանաստեղծի կերպարի և նրա պոեզիայի երաժշտական մարմնավորումն է Է. Հովհաննիսյանի տեսանկյունից: Հենց այս հանգամանքով է պայմանավորված մոնոթեմատիզմի սկզբունքը, որը կարելի է նշմարել շարի բոլոր խմբերգերում:

Այսպիսով, Է. Հովհաննիսյանի «Տերյանական շարը» նշանակալի մեծակտավ ստեղծագործություն է հայ խմբերգային երաժշտության գանձարանում, որը միտված է նորովի, բազմակողմանիորեն բացահայտելու Վ. Տերյանի քնարերգության կերպարայնությունը և ոճը: Շարում կոմպոզիտորը Տերյանին ներկայացնում է ոչ միայն ընդունված քնարական ընթերցմամբ, այլև որպես էպիկական, հայրենասիրական և փիլիսոփայական բանաստեղծ:

---

[7] Նույն տեղում:

ЭДГАР ОГАНЕСЯН.
ХОРОВОЙ ЦИКЛ НА СЛОВА ВААНА ТЕРЬЯНА

ШУШАНИК ОГАНЕСЯН

Хоровой цикл на слова Ваана Терьяна, написанный в 1984-1985г. – один из выдающихся работ в области хоровой музыки Эдгара Оганесяна, одного из представителей современной армянской композиторской школы. Здесь композитор по-новому открыл для себя образ великого армянского поэта В. Терьяна с эпическими, патриотическими и философскими оттенками. Цикл состоит из двадцати номеров (a capella), где музыкальная форма и содержание продиктованы поэзией и поэтическом образом. Полифония имеет большое значение в хоровом цикле, так как служит способом, которым можно понять поэта глазами композитора. С помощью использования различных методов полифонического выражения, композитор открывает многогранный образ и глубокую внутренную сущность поэта. А монотематизм даёт циклу особенности масштабного произведения путём сквазной разработки.

Ключевые слова – Эдгар Оганесян, хоровой цикл, Ваан Терьян, традиционное мышление, национальные ритмоинтонации, полифония, монотематизм, гомофонно-гармонический склад.

THE EDGAR HOVHANNISYAN'S
CHORAL MUSIC CYCLE ON VAHAN TERYAN'S POETRY

SHUSHANIK HOVHANNISYAN

The choral music cycle on Vahan Teryan's poetry is written in 1984-1985 by Edgar Hovhannisyan, one of the brightest representatives of the contemporary Armenian composers' school. This cycle is an outstanding creation where the Edgar Hovhannisyan reveals the image of the great Armenian poet Vahan Teryan in a new way: epic, patriotic and philosophical manifestations. The choral cycle consists of twenty a capella choruses, in each of which the poetry and the poetical character dictate the definite musical form and the inmost, hidden message. Polyphonic thinking being an important stylistic features of Edgar Hovhannisyan is of great significance in the choral cycle. Due to the composer's use of polyphonic tricks and interpretation, the poet's image could reflect its multi-layered and deep essence. Whereas the presence of monothematicism imparts to the cycle the features of an exquisite monolithic composition with a transverse development.

Key words – Edgar Hovhannisyan, "Teryanian choral cycle", Vahan Teryan, a choral work, national rhythm intonation, polyphony, monothematicism.